

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՏԵՔՍԱԿԱԶՍ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՇՈՒՐՀ

Գերմանագիտության մեջ եղանակավորող մասնիկների¹ բնութագրերից է մասնավորապես նրանց նախադասության անդամ չլինելը /3, էջ 21/: Շատ մեզ դա նշանակում է, որ վերջինները հարկ է քննարկել նախադասությունից վեր գտնվող մակարդակում: Գերմաներենի հատկապես խոսակցական լեզվի նյութը հիմք է տալիս ենթադրելու, որ եղանակավորող մասնիկների բնութագրական գործառույթներից է տեքստի կապակցվածությունն ապահովելը, որը բացահայտվում է ոչ թե նախադասության, այլ տեքստի մակարդակում: Տեքստաբանությունը որպես լեզվաբանական գիտակարգ՝ ընդունելով տեքստն իբրև իր ուսումնասիրությունների առարկա, փորձում է դիտարկել այն իրեն բնորոշ միջոցներով: Տեքստն այստեղ բնութագրվում է ելնելով լեզվաբանական գրականության մեջ ընդունված սահմանումից որպես ոչ միայն գրավոր, այլ նաև բանավոր մտահաղացած և ամրագրված արտահայտությունների հաջորդական շղթա /4, էջ 18/: Տեքստերի լեզվաբանական ուսումնասիրությունը հանգեցրեց վերջինները բնութագրող հատկանիշների նկարագիր ստեղծելուն: Ինչպես հայտնի է տեքստի հիմնական հատկանիշներն են ամբողջականությունը, միասնականությունը և կապակցվածությունը:

Սույն հոդվածի շրջանակներում քննարկվում է տեքստի նշված հատկանիշներից կապակցվածության խնդիրը և այդ առումով արդիական է դառնում վերջինի որևէ գուցե թե աշխատանքային սահմանումը: Կապակցվածությունը ենթադրում է տեքստի հատվածների միջև իմաստային միավորների առկայություն, որոնք փոխլրացնում են միմյանց, և որոնցից մեկի իմաստը պարունակում է հղում մյուսին կամ մյուսներին: Հարկ է նշել, որ տեքստի կապակցվածության հարցը դիտարկելիս որպես այն ապահովելու լեզվական մջջոցներ նշվում են նաև ԵՄ-ները (2, 88-89): Գուցե տրամաբանական կլինե՞ր նաև հակառակ մոտեցումը՝ փորձել բնորոշել ԵՄ-ները՝ ելնելով տեքստում դրանց ունեցած դերից: Սռավել ևս, որ նախադասության մակարդակում, ինչպես արդեն ասվել է, ԵՄ-ների հատուկ դերը չի բացահայտվում: Նախադասությունից վեր մակարդակում նրանք ստանում են կապակցական դեր, որն ավելի պակաս երևացող է քան օրինակ հետքերության դեպքում: Ի տարբերու-

¹ «Եղանակավորող մասնիկ» եզրը օգտագործվում է նաև «ԵՄ» հապավումով:

թյուն հետքերության երկու մասերի նշութավորվածությամբ, եՄ-ների հղումը տեքստի հատվածներին կամ արտալեզվական իրադրությանը միայն մասամբ է նշութավորվում, ընդ որում նշութավորված է միայն եՄ պարունակող հատվածը: Անդրադառնալով տեքստի կապակցվածությանը՝ կարևորում ենք այդ առումով եՄ-ով նշութավորված տեքստային հատվածները: Բանն այն է, որ տեքստի կապակցվածությունն ապահովելու տեսակետից լեզվական միջոցները ամենևին հավասարագոր չեն. դրանց շարքում առանձնանում են մի քանիսը, որոնց իմաստը ներառում է նաև կապակցականություն: Դրանցից են ցուցական դերանունները, քերականական կարգերից մի քանիսը (օր. բայի դիմային ձևերը), ինչպես նաև որոշ եՄ-ներ: Այսպես օրինակ ցուցական դերանունը մատնանշում է որևէ առարկա լայն իմաստով՝ այսինքն իր ռեֆերենտը, մինչդեռ որոշ եՄ-ների օգտագործումը պայմանավորված է հաղորդակցական իրադրությամբ և այդ իսկ պատճառով հղում է այն: Հմտ. 1. *Ղա* տուր ինձ; 2. Հջշողությունը *որ* լրիվ կորցրել է: Նույն տարբերակումը կարելի է դիտել նաև գերմաներենում. Հմտ. 1. *Gib mir bitte das!* 2. *Wie hieß sie denn?* Երկրորդ նախադասությունների դեպքում ենթադրվում է, որ ասվածին նախորդում են խիստ որոշակի իրավիճակներ: Գերմաներենի եՄ-ները աչքի են ընկնում ևս մեկ, շատ կարևոր գործառնությով. նրանց կատարում են տեքստի հատվածների միջև տրամաբանական հարաբերությունները կարգավորող և բացահայտող դեր: Գերմաներենի եղանակավորող բառերի ուսումնասիրության ժամանակ արդեն քազմիցս նշվել է, որ վերջինները հաճախ հանդիպում են փաստարկային և պատճառահետևանքային հարաբերության դրսևորումների մեջ (I, 211): Սակայն ավելի լայն է եՄ-ների տեքստակազմ – „գրուցակազմ“ (I, 211) գործառնությը: Այդ առումով նրանք ինչ-որ տեղ նման են շաղկապներին, որոնք հատկապես պատճառական կապերի մեջ իմաստատու դեր են ստանձնում:

Հայտնի է, որ շաղկապները տեքստի մակրոկառույցում հանդես են գալիս իբրև մասնատող ազդանշաններ: Շաղկապների և եղանակավորող բառերի մեջ մեր կարծիքով նկատվում է մի յուրահատուկ հարաբերություն. դրանց միջև նկատվում է որոշակի համապատասխանություն, թեև ակնհայտ է, որ շաղկապների իմաստը ստույգ է (և դրանցով ստեղծված կապը ավելի կարծր, ավելի պարտադրող է), իսկ եՄ -ներինը՝ ավելի ճկուն և նուրբ: Կարելի է որոշ առումով եզրակացնել, որ շաղկապները կիրառվում են գրավոր, իսկ եղանակավորող մասնիկները՝ զուգահեռաբար բանավոր խոսքում: Քանի որ բանավոր խոսքը զուգորդվում է հարալեզվական արտահայտչամիջոցներով և սովորաբար ներհյուսված է իրադրության մեջ, ապա շաղկապների կիրառման անհրաժեշտությունը թուլանում է: Այնպես, ինչպես գրավոր տեքստում հաճախ

հանդիպում են շաղկապներ, բանավոր տեքստում նույն հաճախականությամբ հանդիպում են *ԵՄ*- ներ: Այդպիսով գործառույթային առումով զուգահեռներ են նկատվում զրավոր խոսքում՝ շաղկապների և բանավոր խոսքում՝ եղանակավորող մասնիկների միջև: Իբրև տեքստը կազմակերպող միջոցներ *ԵՄ*-ները մեծ մասամբ պահանջում և ենթադրում են որոշակի իմաստով նախորդող, երբեմն հաջորդող ասույթներ (2, 89): Այսպես, օրինակ, *ja* *ԵՄ*-ը նշում է, որ իրեն պարունակող հատվածը խոսքաշարում ենթադրում է խոսողի և խոսակցի ընդհանուր նախնական իմացություն, որը գրույցի հիմք է ստեղծում: Օրինակ՝

„Bernhard ist immer wieder nach Steinhof‘ gegangen. Steinhof ist *ja* die schönste Nervenheilanstalt der Welt“ - նախադասության *ja-ԵՄ*- ով խոսողը դիմում է իրեն և խոսակցին հայտնի իրողությանը, այն որ Շտայնհոֆը աշխարհի ամենգեղեցիկ նյարդաբանական կենտրոնն է: *Ja-* *ԵՄ*-ը այստեղ միացնում է երկու նախադասությունները՝ ստանձնելով կապակցող, „զրուցակազմ“ դեր և կարող է փոխարինվել *weil* -նախադասությամբ: Bernhard ist *ja* immer wieder nach Steinhof‘ gegangen, weil Steinhof die schönste Nervenanstalt der Welt ist.

Հաջորդ երկու նախադասությունների առումով գործ ունենք տեքստային տարբեր բնույթի կապակցվածության հետ. մի դեպքում իրար են կապակցվում ենթադրվող տեքստի տարբեր հատվածներ, իսկ երկրորդում առկայացվում է ամբողջ հաղորդակցական իրադրությունը: 1. Lies das Buch durch! /Կարդա՝ գիրքը:/ 2. Lies *ja* das Buch durch! /*Դե* կարդա՝ գիրքը:/ Համեմատելով բերված նախադասությունները, վստահաբար կարելի է պնդել, որ առաջինը անկախ է համատեքստից, իսկ երկրորդը նախ հնարավոր է որոշակի համատեքստում, ապա տեղեկություն է տալիս այդ համատեքստի մասին, որը ընկալելի, ըմբռնելի է դառնում տվյալ դեպքում *ja* *ԵՄ*-ի կիրառությամբ: Զննարկվում է գրույցի պահին հետաքրքրող գիրքը, որին խոսակցներից մեկը ծանոթ չէ: Որոշակի ըննարկումից հետո հնարավոր է 2-րդ նախադասությունը: Չնայած երկու օրինակներն էլ նպաստում են կապակցվածությանը, բայց առաջին օրինակը ակնհայտորեն կապակցում է տեքստի հատվածները, իսկ երկրորդը վերաբերում է հաղորդակցական լայն իրադրությանը: Նշված տեքստակազմիչ գործառույթները ամենևին չեն սպառում եղանակավորող մասնիկների ոչ տեքստակազմիչ և ոչ էլ առավել ևս դրանից դուրս գտնվող գործառույթները:

1 Brauße U. Zum Problem der sogenannten Polyfunktionalität von Modalpartikeln // Zeitschrift für Phonetik, Sprachwissenschaft und Kommunikationsforschung, Berlin 1986

2 Engel U. Deutsche Grammatik, Heidelberg 1988

3 Helbig G. Lexikon deutscher Partikeln, 1988, Leipzig.

4 Brinker Klaus Linguistische Textanalyse, 1997, Berlin